

## ՖԻԵԳԵՐԻԿ ՄԱԿԼԵՐԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Մ. Պ. ՄԻՆԱՍՅԱՆ

Ֆ. Մակլերը ֆրանսիացի ականավոր և բաղմերախտ հայագետ է (վախճանվել է 1938 թ.): Հայ ժողովրդի պատմության, կրոնի, գրականության ու արվեստի տարբեր ճյուղերին վերաբերող հոդվածներով, ղեկուցումներով և աշխատություններով նա մեծ ծառայություն է մատուցել հայագիտությանը: «Հաղվաղեալ է, որ օտարազգին մի այլ ժողովրդի համար արած լինի այն, ինչ Մակլերն ուղեց և կարողացավ իրագործել... իր մշակույթով հույժ փառավոր հայ ժողովրդի համար», — գրել է նրա մասին ռումինացի հայագետ Ն. Յորդան:

Հայագետ Անտուան Մեյեից հետո, 1905—1938 թթ. Փարիզի Արևելյան լեզուների գորոցում դասավանդելով հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), հայոց պատմություն և Հայաստանի աշխարհագրություն, Մակլերը պատրաստել է բաղմաթիվ հայագետներ, որոնցից վերջինը ուսուցչապետ Ֆրեդերիկ Ֆեյդին է: Մեյեի հետ, 1920 թ. նա Փարիզում հիմնադրել է հայագիտական ընկերություն և «Հայագիտական հանդես», որոնք գոյատևել են մինչև 1933 թ.: Ֆրանսիայի լուսավորության մինիստրության լիազորության մեջ այցելելով եվրոպական գրադարաններ ու ղիվաններ՝ նա հրատարակել է հայերին առնչվող պատմական հետաքրքրական տեղեկություններ, վավերագրեր, ձեռագրերի նկարագրություններ և հիշատակարաններ, Եվրոպայի հայկական գաղութների ժամանակագրություններ և այլն:

1909 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին Մակլերը գիտական ուղևորություն է կատարել ղեպի Էջմիածնի վանք, նպատակ ունենալով ուսումնասիրել հայերեն ավետարանի կարևորագույն ձեռագրերը, հետագայում իր գրած *Le texte arménien de l'Évangile* («Ավետարանի հայերեն բնագիրը») արժեքավոր աշխատության համար: Չսահմանափակվելով դրանով, Մակլերը միաժամանակ իր այցելած քաղաքների հայության հոգևոր կյանքի մասին բաղմազան տվյալներ է հավաքում, պատրաստում նյութեր: Նկատի առնելով այս բոլորի գիտական արժեքը, ստորև շատ սեղմ կանգրագառնանք նրա հաշվետվության գլխավոր կետերին, որ հրատարակվել է 1911 թ., Փարիզում<sup>1</sup>:

Ինչպես պարզվում է, նախքան Էջմիածին գալը, Մակլերը այցելում է Վիեննայի հայկական սակավամարդ գաղութ և Մխիթարյան միաբանություն, ուսումնասիրելով վանքի թանգարանում պահվող հունարեն մի տապանագիր և մատենագրանի նոր ստացած հայերեն ձեռագրերը:

<sup>1</sup> F. Mac Ier. Rapport sur une mission scientifique en Arménie russe et en Arménie turque (juillet-octobre) [Nouvelles Archives des missions scientifiques, n. s., fasc. 2] «Հաշվետվություն Արևելյան և Արևմտյան Հայաստան կատարած գիտական գործուղման մասին», Փարիզ, 1911:

1909 թ. հուլիս ամսին Մակլերը ժամանում է էջմիածին, որտեղ նրան շատ սիրալիր են ընդունել կաթողիկոսական տեղապահ Սուրենյանցը, մատենադարանապետ Մեսրոպ Տեր Մովսեսյանը և բանասեր Գալուստ Տեր Մկրտչյանը: Մակլերն իր հետախուզումներն սկսում է հայերեն ավետարանի հին ձեռագրերից. նրան հատկապես հետաքրքրում է այն հարցը, թե հայերեն ավետարանը ասորերե՞ն բնագրից է թարգմանվել, թե հունարեն: Համեմատելով ավետարանի հայերեն, ասորերեն և հունարեն մի քանի հատվածներ՝ նա եկել է այն եզրակացության, թե «1) Հայերեն ավետարանը թարգմանվել է ասորերեն մի շատ հին բնագրից: 2) Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը վերանայել են այդ թարգմանությունը՝ հիմք ընդունելով հունարեն բնագիրը. 3) 432 թ. այդ թարգմանությունը դարձյալ վերանայել են Կ. Պոլսից բերված հունարեն ձեռագրերի հիման վրա և վերջապես, 4) 6-րդ դ. հունաբան դպրոցը երրորդ անգամ է վերանայել այդ թարգմանությունը» (Հաշվետվություն, էջ 27):

Մակլերը նկարագրել է հայերեն ավետարանի վեց ձեռագիր, ֆրանսերեն թարգմանելով հիշատակարանները: Ուղեցույց ընդունելով էջմիածնի № 229 ձեռագիր ավետարանին Ա. Մեյեի տված արժեքավորումը, որպես հայերեն ավետարանի լավագույն ձեռագրի<sup>2</sup>, Մակլերը ոչ միայն նկարագրել է այն, այլև լուսանկարել, հետազայում լուսատիպ հրատարակելու համար. այդ նրան հաջողվեց միայն 1920 թ., թեև աշխատանքը պատրաստ էր 1914 թ. ամռանը:

Մակլերը հետաքրքրվում է նաև էջմիածնում հայտնաբերված հունարեն և լատիներեն արձանագրություններով: Ի միջի այլոց, նա հաղորդում է, թե Կոմիտաս վարդապետը Արագածի գագաթին, ճանապարհը եզերող ապառաժների վրա, նկատել է սեպագիր արձանագրություններ, որոնք ըստ ականատեսի, մինչ այդ ծանոթ չէին գիտական աշխարհին:

Մակլերը հետամուտ է եղել հայոց աշխարհում քրիստոնեության սկզբնավորման պատմությանը: Այս խնդրի լուսաբանման ժամանակ և, ընդհանրապես, նրան մեծապես օգտակար է եղել բազմավաստակ հայագետ Գալուստ Տեր Մկրտչյանը, որին, ըստ այսմ, Մեյեն 1909 թ. նոյեմբերին հայտնել է. «Մակլերը շատ է ուրախացել ձեզ հանդիպելով. դուք նրա համար նախախնամություն եք եղել, ինչպես եղաք ինձ համար»<sup>3</sup>. Մեյեն Մակլերի «Հաշվետվության» գրախոսականում գրել է նաև. «Հայաստանում քրիստոնեության հին պատմության վերաբերյալ Մակլերը գլխավորապես շարադրել է Գալուստ Տեր Մկրտչյանի հայացքները»<sup>4</sup>: Այդ չի թաքցնում նաև Մակլերը, «Հաշվետվության» մեջ գրելով «Մեծ արժանիքի տեր և խորապես ինքնուրույն այս գիտական (Գալուստ Տեր Մկրտչյանը — Մ. Մ.), որին վատառողջ վիճակը հրատարակելու հնարավորություն չի տալիս, մեզ երևաց իբրև ինքնուրույն դպրոցի պարագլուխ: Նա սիրով է հաղորդում իր հետազոտությունների արդյունքները, և սրանց արձագանքը, երբեմն անանուն, գտնում ենք երիտասարդ հետազոտողների աշխատանքներում, որոնք առանց նրա անունը հիշատակելու, գոնե այն ծառայությունն են մատուցում, որ գիտական աշխարհում տարածում են նրա գաղափարները» (Հաշվետվություն, էջ 19):

<sup>2</sup> A. Meillet. De quelques évangélistes arméniens accentués (Mémoires orientaux publiés par l'École des langues orientales), Paris, 1905, p. 133—168.

<sup>3</sup> Մ. Մինասյան, Անտուան Մեյեի նամակները հայ բանասերներին (Բանրիբ Հայաստանի արխիվների, 1966, թ. 1, էջ 114):

<sup>4</sup> Journal asiatique, X<sup>e</sup> serie, XVII, 1911, 377.

Քրիստոնեությունը Հայաստան ներմուծելու գործում Մակլերը մեծ և առաջնակարգ տեղ է հատկացնում Աղբիանու եպիսկոպոսին, որ նախքան Գրիգոր Լուսավորիչը եղել է հայ քրիստոնեության առաջնորդ: Մակլան Լուսավորիչի կողմնակից հայ պատմագիրները նսեմացրել են նրան: Մակլերը մեջ է բերում Գ. Տեր Մկրտչյանի այն միտքը, թե Լուսավորչի կյանքն ու գործունեությունը անց են կացել Կարինում և ոչ էջմիածնում:

Մակլերն այն կարծիքն է արտահայտել, թե «հավանաբար Մեսրոպ Մաշտոցն է գրել Աղաթանգեղոսի առաջին տարբերակը», որ դարերի ընթացքում ենթարկվել է փոփոխությունների:

Կոմիտասի ուղեկցությամբ Մակլերն այցելել է էջմիածնի Գայանե, Հռիփսիմե, Շողակաթ տաճարները, ինչպես նաև ուղևորվել Օշական, Աշտարակ, Մուղնի, Կարպի, Ուշի, Սաղմոսավանք, Օհանավանք, Գեղարդ, ծանոթացել հնօրյա հուշարձաններին, լուսանկարել, նկարադրել, դրանց տվել պատմական համառոտ տեղեկություններ, անդրադարձել դրանց հետ կապված տոնակատարություններին և ուխտագնացություններին, վերհիշել ժողովրդական հավատալիքները (մատաղ, երգ ու պար եկեղեցու բակում, եկեղեցուց կանանց մոմակալ դողանալը՝ որդեծնության համար և այլն): Նա առանձին տեղ է հատկացրել Զվարթնոցին՝ ընթերցողին լայնորեն ծանոթացնելով նրա կառուցման, ավերման հանգամանքները, պիղումները և ճարտարապետ Թորոս Թորամանյանի վերականգնած հասակագիծը:

Մակլերի ուղագրությունից շեն վրիպել իր այցելած գյուղերի բնակչության վիճակը և տնտեսական դրադմունքները: Օրինակ, նա նշում է, որ Աշտարակի շրջանի որոշ գյուղերում բնակչություն հաստատած թաթար և քուրդ խաշնարածները համերաշխ են ապրում հայերի հետ, և մահմեդականները մղկիթ շունենալու պատճառով հայոց եկեղեցին են հաճախում:

Հայկական արվեստին նվիրված իր հետադա աշխատությունների մեջ Մակլերն ավելի մանրամասն է նկարագրել էջմիածնի հուշարձանները. նույնն արել է նաև հրապարակային զեկուցումների ժամանակ, ցուցադրելով ապակետիպ լուսանկարներ:

Հայաստանում Մակլերը նշմարել է ժողովրդական այնպիսի հավատալիքներ, որոնք զայիս են հայոց հեթանոսական շրջանից, ինչպես՝ ծառերի, հինավուրց եկեղեցիների, խափանված քարհանքերի, հնադարյան ձեռագիր մատյանների և օձերի պաշտամունքը:

1909 թ. սեպտեմբերին էջմիածնից վերադառնալով, Մակլերը որոշ ժամանակ կանգ է առնում Թիֆլիս քաղաքում: Գիտնականի նոթերի այս մասում ուղագրավ տվյալներ ենք գտնում քաղաքի հայ բնակչության, հասարակական կազմակերպությունների, հայ մամուլի, թատրոնի և գրողների մասին: Նա հանդիպել է ծերունավարդ Գաբրիել Սունդուկյանի, իր իսկ բառերով՝ «հայ թատրոնի հոր» հետ, և զրի առել նրա կենսագրությունը, փարիզյան հուշերը, տեղեկություններ «Սեր և աղատություն» նրա վերջին թատերախաղի մասին, որի եկամուտն ամբողջովին հատկացվել էր Աղանայի հայ որբերին<sup>5</sup>: Հետագայում Փարիզում և Ռումինիայում, հայ թատրոնի մասին կարգացած զեկուցումներում,

<sup>5</sup> Տե՛ս Մ. Մ ի ն ա ս յ ա ն, Յրեղերիկ Մակլերի տեսակցությունը Գաբրիել Սունդուկյանի հետ, Սովետական դրականություն, 1964, № 1, էջ 144—145:

Մակլերն ավելի մանրամասն է վերլուծել Գ. Սունդուկյանի և հայ մյուս թատերագիրների գործերը:

Հոկտեմբերի երկրորդ կեսին Մակլերը ծովային ճանապարհով գալիս է Պոլիս: Դարձյալ տեղեկություններ իր հանդիպած ծովափնյա քաղաքների՝ Բաթումի, Տրապիզոնի, Օրդուի, Սամսոնի, Բաֆրայի, Ինեբուլուի հայություն մասին: Ամենուրեք նրան հետաքրքրել են միայն հայերն իրենց քանակով, դպրոցներով, հասարակական և տնտեսական դիրքով:

Պոլսահայության մասին Մակլերի տեղեկություններն ավելի հանգամանալից են: Նա բարյացակամ և սրտացավ զգացմունքներով է վերհիշեցնում քաղաքի հայ բնակչության կրած անողոք հալածանքները: Տեղեկացնում է քաղաքի վարչության և առևտրի ցանցում հայերի գրաված դիրքի, հայ մամուլի, հայկական հասարակական կազմակերպությունների և թատրոնի մասին: Զերմ գովասանքով է խոսում պոլսահայ մամուլի բազմազանության և արժանիքների մասին, որոնցով նա այն շատ ավելի բարձր է դասում, քան պետական ազատություն վայելող թուրքական և հունական մամուլը. «Նույնիսկ հալածանքի ամենամոռայլ օրերին,— գրել է նա,— հայերը Պոլսում ունեցել են հինգ կամ վեց օրաթերթ և նույնքան էլ շաբաթական հանդեսներ, մեծ մասամբ գրական. մինչդեռ թուրքերեն և հունարեն լեզուներով հազիվ էին հրատարակվում նույնքան օրաթերթ և երկու կամ երեք պարբերական» (Հաշվետվություն, էջ 110):

Պոլսահայ թատրոնի մասին խոսելիս Մակլերը մեծ գովեստով է հիշատակել Աբելյան-Արմենյան թատերախմբի ճաշակավոր խաղացանկի արդիականությունը իր ժամանակին, մայրաքաղաքում և գավառներում տված ներկայացումների բարձր վարպետական մակարդակը:

Պոլսի մոտ գտնվող Օրթաքոյ գյուղի Անտոնյան հայրերի վանքում Մակլերն ուսումնասիրել է և նկարագրել «Թարգմանչաց» կոչվող հուշակավոր ավետարանը, որն, ըստ ավանդության, իբր ընդօրինակված է մեր առաջին թարգմանիչների ձեռագրից: Մեջ բերելով հայագետների և ֆրանսիացի արվեստագետ Գաբրիել Միլեի կարծիքները՝ Մակլերը վիճարկում է ձեռագրի գրության թվականը: Հակառակ ոմանց, որոնք կարծում են, թե ձեռագիրը 716 թվականից է, Գ. Տեր Մկրտչյանի հետ Մակլերը ենթադրում է, ելնելով հատկապես ձեռագրի մանրանկարներից, թե այն 10-րդ դարից է գալիս<sup>6</sup>:

Վիեննա—Հայաստան—Թիֆլիս—Պոլիս ուղևորության շնորհիվ Ֆրեդերիկ Մակլերը ծանոթացավ հայերի հետ իրենց հայրենիքում և վաղուց հաստատված քաղաքներում, ականջալուր եղավ նրանց մայրենի խոսքին, որ նա կոչված էր դասավանդելու, ականատես եղավ հայկական դարավոր մշակույթի վիճակներտ և ձեռագիր հրաշալի կոթողներին, հայագիտության համար նպաստավոր փոխհարաբերություններ հաստատեց հայ մտավորականների հետ: Եվ, որ ամենակարևորն էր, իր տեսածների մասին նվերուպային հաղորդակից դարձրեց ոչ միայն գիտնականի բարեխղճությամբ, այլև ջերմ հայասերի ոգով:

<sup>6</sup> Մակլերի «Հաշվետվության» գրախոսականում Մեյեն այս հարցի մասին գրել է հետևյալը. «Ձեռագիրը ոչ մի դեպքում 10-րդ դարից հետո գրված չէ և նշանավոր է որքան իր հեղինակությամբ, նույնքան էլ այն զարդարող մանրանկարներով» (Ժուռնալ ադիատիկ, նույն տեղում, էջ 378):

ПУТЕШЕСТВИЕ ФРЕДЕРИКА МАКЛЕРА В АРМЕНИЮ

М. МИНАСЯН

Р е з ю м е

Известный арменовед Фредерик Маклер, посетив по поручению министерства просвещения Франции библиотеки и архивы Европы, собрал и издал касающиеся армян исторические сведения, документы, памятные записи, описание рукописей и хронику армянских колоний Европы. В течение июля-октября 1909 г. он находился в научной командировке у конгрегации Мхитаристов в Вене, в Тифлисе и в Армении, в Эчмиадзине. В статье вкратце представлены научные результаты этого путешествия на основании изданной Маклером книги «Rapport sur une mission scientifique en Arménie russe et en Arménie turque, Paris, 1911».